ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

ԵԴ2/6490/02/24 | ք. Երևան
26 Օգոստոսի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա. Սաֆարյանի (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով «Աստիճան» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող), ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Երրորդ անձ)՝ 04.10.2022 թվականին կնքված թիվ «ՏԿԵՆ-ԳՀԽԾՁԲ-2022/23ՏՀ-2» ծածկագրով պայմանագրի 24.07.2024 թվականի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելու հրամանն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայցվորը 09.08.2024 թվականին էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ «ՏԿԵՆ-ԳՀԽԾՁԲ-2022/23ՏՀ-2» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելն արգելելու (դադարեցնելու) պահանջների մասին մասին, որը 12.08.2024 թվականին բաշխվել է դատավոր Գ. Վարդանյանին:

Դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 16.08.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը

վերադարձվել է:
Հայցվորը հայցադիմումը և կից փաստաթղթերը կրկին՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է Դատարան, որը 20.08.2024 թվականին բաշխվել է դատավոր Ա. Սաֆարյանին:
Նշված քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով դատավորի աշխատակազմին հասանելի է դարձել 21.08.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ Պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պետք է պահանջել «ՏԿԵՆ-ԳՀԽԾՁԲ-2022/23ՏՀ-2» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 199-րդ, 200-րդ, 202-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը.

ՈՐՈՇԵՑ

1. «Աստիճան» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 04.10.2022 թվականին կնքված թիվ «ՏԿԵՆ-ԳՀԽԾՁԲ-2022/23ՏՀ-2» ծածկագրով պայմանագրի 24.07.2024 թվականի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելու հրամանն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պահանջել Դատարան ներկայացնել «ՏԿԵՆ-ԳՀԽԾՁԲ-2022/23ՏՀ-2» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by SAFARYAN ARMINE 6107840465

Դատավոր՝ Արմինե Սաֆարյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am